ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/127

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ռ. Վարդանովայի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7402-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.05.2021թ.-ի թիվ 1/18-2/27238-2021 գրության հիման վրա, 11.05.2021թ.-ին «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.05.2021թ.-ին:

12.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/127 համարի ծածկագիրը:

18.05.2021թ.-ին և 10.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.06.2021թ.-ին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 06.05.2021թ. թիվ 1/18-2/27238-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիում-հայտարարությունում (Հավելված 1) ռուսերեն լեզվով անվանումը նշված չի եղել, ինչպես նաև վերոնշյալ Հավելվածի 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է եղել «Կ. Մարգարովա»: Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) ընդհանրապես ներկայացված չի եղել, իսկ հայտի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են եղել Ռաիսա Վարդանովաի

կողմից, սակայն կցված չի եղել լիազորագիրը, որով վերջինս լիազորված է եղել տվյալ գործողությունը կատարելու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 30.04.2021թ-ին ընթացակարգը կասեցվել է մեկ աշխատան-քային օրով և «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին ծանուցվել է անհամապատասխանու-թյունները շտկելու մասին:

Սահմանված ժամկետում «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն շտկել է անհամապա-տասխանությունները, սակայն վերջինիս կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանել հրավերի պահանջներին, և գնահատող հանձնա-ժողովի կողմից «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 11.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7402-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 17.05.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՍՅ-ԼՕ-2021/127 11.05.2021թ. նախաձեռնվաց ընթացակարգի հայտնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կողմից պնդումն առ այն, որ «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի տվյալ ընթացակարգով առաջարկվող ապրանքի ամբողջական

նկարագիրը ընդհանրապես ներկայացված չի եղել չի համապատասխանում իրականությանը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն ներկայացրել էր ապրանքի ամբողջական նկարագիրն https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով՝ ինչպես կարգն է, ապացույցը կցվում է: Հաշվի առնելով վերոգրյալը և համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի պատվիրատուն պարտավոր էր ծանուցել «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին տեխնիկական բնութագրի մասով անհամապատասխանությունները շտկելու մասին, ինչը տեղի չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը ակնհայտ է դառնում, որ «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր չկան:»:

4. <u>ՍՑ-LO-2021/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով 21.04.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն:

iii. «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնայի աճուրդին մասնակցելու դիում-

հայտարարությունում (Հավելված 1) ռուսերեն լեզվով անվանումը նշված չէ, ինչպես նաև վերոնշյալ Հավելվածի 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է «Կ. Մարգարովա» անունը, սահմանված կարգով լրացված և հաստատված ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), ներկայացված հայտի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են Ռաիսա Վարդանովայի կողմից, սակայն կցված չէ այն փաստաթուղթը (լիազորագիրը), որով վերջինիս տրված է տվյալ գործողությունը կատարելու լիազորությունները:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 04.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ ապրանքները աշխատանքային ռեժիմում պետք է լինեն համատեղելի և իրար հետ աշխատեն առանց որևէ տեխնիկական շեղման, սակայն մասնակցի կողմից առաջարկվող SmartBuy ֆիրմայի S4, black մակնիշի ականջակալները անհամատեղելի են հրավերի առաջին չափաբաժնով սահմանված ռացիայի տեխնիկական բնութագրի հետ, քանի որ ունեն ֆիզիկապես մեկ ինտերֆեյս 3,5 մմ, իսկ ռացիան ունի միացման 2 ինտերֆեյս, այսինքն միկրոֆոնի մուտքը առանձին է և չի կարող օգտագործվել մեկ մուտքով:

vii. Նույն արձնագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7402-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով 21.04.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում

հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները: Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են

վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով 21.04.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/015» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված էլեկտրոնայի աճուրդին մասնակցելու դիում-հայտարարությունում (Հավելված 1) ռուսերեն լեզվով անվանումը նշված չէ, ինչպես նաև վերոնշյալ Հավելվածի 2-րդ կետում մասնակցի անվանման փոխարեն նշված է «Կ. Մարգարովա» անունը, սահմանված կարգով լրացված և հաստատված ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), ներկայացված հայտի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են Ռաիսա Վարդանովայի կողմից, սակայն կցված չէ այն փաստաթուղթը (լիազորագիրը), որով վերջինիս տրված է տվյալ գործողությունը կատարելու լիազորությունները: Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 04.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի տեխնիկական բնութագրում նշված է, որ ապրանքները աշխատանքային ռեժիմում պետք է լինեն համատեղելի և իրար հետ աշխատեն առանց որևէ տեխնիկական շեղման, սակայն մասնակցի կողմից առաջարկվող SmartBuy ֆիրմայի S4, black մակնիշի ականջակալները անհամատեղելի են հրավերի առաջին չափաբաժնով սահմանված ռացիայի տեխնիկական բնութագրի հետ, քանի որ անեն ֆիզիկապես մեկ ինտերֆեյս 3,5 մմ, իսկ ռացիան ունի միացման 2 ինտերֆեյս, այսինքն միկրոֆոնի մուտքը առանձին է և չի կարող օգտագործվել մեկ մուտքով, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին և ուսումնասիրելով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված տեխնիկական բնութագրերն ու Մասնակցի կողմից Հանձնաժողովին որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում, Հանձնաժողովի 04.05.2021թ.-

ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները վերացական են ու չեն ելնում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջներից:

Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված տեխնիկական բնութագրում առկա չէ մատնանշում, որ 1-ին չափաբաժնով սահմանված ապրանքները պետք է լինեն համատեղելի 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքների հետ և ընդհակառակը, իսկ Հրավերում առկա՝ *«Նշված ապրանքները աշխատանքային ռեժիմում պետք է լինեն համատեղելի և իրար հետ աշխատեն առանց որևէ տեխնիկական շեղման: (без помех).»* նախադասությունը՝ որպես գնման առարկայի բնութագրի մաս, ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, դրանով իսկ հանգեցնելով Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտման:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք

ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի

6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7402-2021 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/127 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**